



Համարը N 363-Ն
Տիպը Հրաման
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2003.12.01/27(145) Հոդ.420
Ընդունող մարմինը Բնապահպանության նախարար
Ստորագրող մարմինը Բնապահպանության նախարար
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 11.12.2003

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 09.10.2003
Ստորագրման ամսաթիվը 09.10.2003
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
 ՀՀ արդարադատության
 նախարարության կողմից
 12 նոյեմբերի 2003 թ.
 Պետական գրանցման թիվ 10503349

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

9 հոկտեմբերի 2003 թ.
 ք. Երևան N 363-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 12-ի «Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության փորձաքննության կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 640 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի

Հրամայում եմ՝

Սահմանել ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության փորձաքննության փորձագիտական եզրակացության ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, համաձայն հավելվածի:

Նախարար Վ. Այվազյան

Հավելված
ՀՀ բնապահպանության նախարարի
2003 թ. հոկտեմբերի 9-ի
թիվ 363-Ն հրամանի

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն փաստաթղթով սահմանվում են ստումային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության փորձաքննության փորձագիտական եզրակացության (այսուհետ՝ եզրակացություն) ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները:

II. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2. Եզրակացությունը պետք է հաստատված լինի փորձաքննություն անցկացնող կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ: Եզրակացությունը պետք է պարունակի հղումներ օգտագործված գրականության մասին, ներառյալ հրապարակումներ, գիտատեխնիկական հաշվետվություններ, ստումային էներգիայի օգտագործման օբյեկտների շահագործման հետ կապված փաստաթղթեր և այլն:

3. Եզրակացությունը պետք է ներկայացվի պատվիրատուին մեկ օրինակով տպագրված Ա4 ֆորմատի սպիտակ թղթի մեկ կողմի վրա, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակը՝ էլեկտրոնային կրիչով: Գրաֆիկական նյութերը պետք է ներկայացվեն ոչ ավել, քան Ա3 ֆորմատի թղթի վրա, կարդալու համար հարմար մասշտաբով:

4. Եզրակացության մեջ կիրառվող հասկանումները և հասկացությունները պետք է համապատասխանեն ստումային էներգիայի օգտագործման բնագավառում օգտագործվող հասկանումներին և հասկացություններին:

5. Եթե փորձաքննության ընթացքում կատարվել են հաշվարկներ և վերլուծություններ ստուգելու համար ներկայացված նյութերը, ապա դրանց մասին մանրամասն տեղեկությունները բերվում են եզրակացությանը կից հավելվածներում:

III. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

6. Եզրակացությունը պետք է համապատասխանի սույն փաստաթղթի պահանջներին, ինչպես նաև փորձաքննություն անցկացնելու մասին տեխնիկական առաջադրանքում նշված պայմաններին: Եզրակացությունը պետք է պարունակի հետևյալ բաժինները՝

- փորձաքննության առարկան.
- փորձաքննության նպատակը.
- գնահատման չափանիշները.
- փորձաքննության ընթացքում կատարվող գնահատումները.
- եզրակացություններ և առաջարկներ:

7. «Փորձաքննության առարկան» բաժինը պետք է պարունակի փորձաքննության ներկայացված փաստաթղթերի ցանկը, նշելով փաստաթղթերի այն բաժինները և դրանցում արժարժված հարցերը, որոնք ենթակա են փորձաքննության: Եթե փորձաքննության առարկան այլ է, քան փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների գնահատումը, ապա տվյալ բաժնում պետք է նշվեն տեխնիկական առաջադրանքով փորձագիտական կազմակերպության առջև դրված խնդիրները:

8. Փորձաքննության նպատակն է գնահատել փորձաքննության առարկայի համապատասխանությունը՝

- ա) ստումային էներգիայի օգտագործման բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենքների, միջուկային և ճառագայթային անվտանգության չափանիշների, նորմերի ու կանոնների պահանջներին.
- բ) ստանդարտների պահանջներին:

9. Եթե փորձաքննության առարկայի վերաբերյալ բացակայում են ազգային նորմեր, կանոններ և ստանդարտներ, ապա անհրաժեշտ է գնահատել փորձաքննության առարկայի համապատասխանությունը՝

- ա) միջազգային կազմակերպությունների խորհրդատվական փաստաթղթերին.
- բ) զարգացած ստումային էներգետիկա ունեցող երկրներում կիրառվող փորձին, ժամանակակից գիտատեխնիկական նվաճումներին և փորձագետի սեփական կարծիքին և չափանիշներին:

10. «Փորձաքննության նպատակը» բաժնում պետք է թվարկվեն բոլոր փաստաթղթերը և նրանցում բերված պահանջները, որոնք հիմք են ծառայել գնահատման համար:

11. Չարգացած ստումային էներգետիկա ունեցող երկրների փորձը հիմք ընդունելիս համապատասխան փաստաթղթերից մեջբերումներ պետք է կատարվեն և տրվեն հղումներ:

12. Մեփական չափանիշներ կիրառելիս հարկավոր է դրանք հիմնավորել:

13. «Գնահատման չափանիշները» բաժնում հարկավոր է գնահատել հայտատուի կողմից օգտագործված անվտանգության գնահատման չափանիշների բավարար և հիմնավորված լինելը: Պետք է թվարկել փորձագետի կողմից ընտրված անվտանգության գնահատման չափանիշները և կատարել համապատասխան հղումներ:

14. «Փորձաքննության ընթացքում կատարվող գնահատումները» բաժնում նկարագրվում է փորձաքննության ենթարկվող հարցը և փորձագետի կողմից տրվում է գնահատական: Դիտողությունները ձևակերպվում են հակիրճ, նախօրոք տալով հարցի նկարագրությունը: Յուրաքանչյուր դիտողություն պետք է ձևակերպված լինի հստակ և պարունակի մեկ պահանջ:

15. Եզրակացություններ և առաջարկներ`

Փորձաքննության արդյունքում պետք է կատարվեն եզրակացություններ և տրվեն առաջարկներ: Եզրակացությունները պետք է վերաբերեն փորձաքննության առարկայում հայտնաբերված դրական և բացասական կողմերին, սակայն չպետք է նորից շարադրվեն նախորդ բաժնում բերված դիտողությունները: Եզրակացությունները և առաջարկները չպետք է վերաբերեն ձևակերպումներին, տեքստի ձևավորմանը և ուղղագրությանը:

16. Փորձաքննության ընթացքում պետք է գնահատել փորձաքննության առարկայի վերաբերյալ դրական որոշում կայացնելու նպատակահարմարությունը, նույնիսկ եթե առկա են որոշակի թերություններ և տվյալ բաժնում պետք է տրվի առաջարկ կարգավորող մարմնի կողմից համապատասխան որոշում կայացնելու վերաբերյալ:

17. Փորձաքննության վերջնական եզրակացությունը կարող է լինել`

- դրական.
- բացասական.
- դրական, նշված պայմանների պարտադիր կատարման դեպքում:

18. Եզրակացությունը կարող է պարունակել նաև լրացուցիչ նյութեր ներկայացնելու պահանջ, հիմնավորելով դրա անհրաժեշտությունը: